# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ԳՄ-16/8-2
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՅԻՆ/ՏԵՂԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ք. Գավառ <<22>> 01 2018թ.

<<ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը>> ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գավառի ՃՇՇ>> ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Հակոբյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2016թ. օգոստոսի 16-ին կնքված NԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ԳՄ-16/8 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել սույն համաձայնագրի N1.1 հավելվածով նախատեսված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

## 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2018 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 31295880 (երեսունմեկ միլիոն երկու հարյուր իննսունինհինգ հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1, 1.1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան | «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ |
| ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 | ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ,Նալբանդյան 108 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900171078364 | Հ/Հ 1150000216890100 |
| ՀՎՀՀ 08404767 | ՀՎՀՀ 08402186 |
| ------------------------- (ստորագրություն) | ------------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ. | |

Հավելված 1
<< 22 >> 01 2018թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ԳՄ-16/8-2 ծածկագրով համաձայնագրի

**Գնման ժամանակացույց**

/ՀՀ դրամ/

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Գնումը՝ 2018թ | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| 1 | ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ | 6120000 | 10634900 | 9599500 | 4941480 | **31295880** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900171078364
ՀՎՀՀ 08404767

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Գավառի ՃՇՇ» ԲԲԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ,Նալբանդյան 108
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150000216890100
ՀՎՀՀ 08402186

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
<< 22 >> 01 2018թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ԳՄ-16/8-2 ծածկագրով համաձայնագրի

**Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց**

/ՀՀ դրամ/

| Հ/Հ | Ձեռքբերվող աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | Ընդամենը տարի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ | 4388000 | 4388000 | 4388000 | 13090000 | 13090000 | 13090000 | 24101000 | 24101000 | 24101000 | 31295880 | 31295880 | 31295880 | **31295880** |

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900171078364
ՀՎՀՀ 08404767

---------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Գավառի ՃՇՇ» ԲԲԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ,Նալբանդյան 108
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150000216890100
ՀՎՀՀ 08402186

---------------------------
(ստորագրություն)

Հավելված 1.1

<<22>> 01 2018թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ԳՄ-16/8-2

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սահմանային արժեքները 2018թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը

| Ավտոճ անապարհի անվանումը և պիկետաժը | Ավտոճանապարհի տեխնիկական կարգը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը | Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկման պահանջվող մակարդակ | Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/ | Միավորի գինը /հազար դրամ/ | Ընդամենը /հազար դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ** | | | | | | | |
| Գավառ - Նորատուս - Սևանա լիճ կմ1.4 – կմ4.5 | Տեղական II-IV | 3.1 | | բավարար | 3.1 | 320.0 | 992.000 |
| Հ-39 - Կարմիրգյուղ - Սարուխան կմ4.0 - կմ5.4 | Տեղական II-IV | 1.4 | | բավարար | 1.4 | 320.0 | 448.000 |
| Գա վառ - Գեղարքունիք կմ0.00 – կմ12.3 | Տեղական II-IV | 12.3 | | բավարար | 12.3 | 320.0 | 3936.000 |
| Գավառ - Ծաղկաշեն կմ0.00 – կմ6.0 | Տեղական II-IV | 6.0 | | բավարար | 6.0 | 320.0 | 1920.000 |
| Մ10 – Լճափ – Մ10 կմ0.00 – կմ0.9 | Տեղական II-IV | 0.9 | | բավարար | 0.9 | 320.0 | 288.000 |
| Գավառ - Նորատուս կմ3.0 – կմ4.8 | Տեղական II-IV | 1.8 | | բավարար | 1.8 | 320.0 | 576.000 |
| **Ընդամենը** | | **25.5** | | | **25.5** | | **8160.000** |
| **Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ** | | | | | | | |
| Գավառ – Նորատուս - Սևանա լիճ կմ1.4 – կմ4.5 | Տեղական II-IV | 3.1 | SL(I) | միջին | 3.1 | 684.0 | 2120.400 |
| Հ-39 - Կ արմիրգյուղ - Սարուխան կմ0.0 - կմ6.9 | Տեղական II-IV | 6.9 | SL(I) | միջին | 6.9 | 684.0 | 4719.600 |
| Գա վառ - Գեղարքունիք կմ0.00 – կմ12.3 | Տեղական II-IV | 12.3 | SL(I) | միջին | 8.0 | 684.0 | 5472.000 |
| | | | SF(II) | բավարար | 4.3 | 1419.6 | 6104.280 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Գավառ - Ծաղկաշեն<br>կմ0.00 – կմ6.0 | Տեղական II-IV | 6.0 | SL(I) | միջին | 6.0 | 684.0 | 4104.000 |
| Մ10 – Լճափ – Մ10<br>կմ0.00 – կմ0.9 | Տեղական II-IV | 0.9 | SL(I) | միջին | 0.9 | 684.0 | 615.600 |
| **Ընդամենը** | | **29.2** | | | **29.2** | | **23135.880** |
| **Ընդամենը Գավառի տարածաշրջան** | | | | | | | **31295.880** |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 9000171078364
ՀՎՀՀ 08404767

---------------------------
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Գավառի ՃՇՇ>>ԲԲԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Նալբանդյան 108
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000216890100
ՀՎՀՀ 08402186

---------------------------
/ստորագրություն/